

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**  
**ԿՈՂՄԿԸ ԱՐՄԵՆ ՎԱՄԲԱՐԻՆ**  
**«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»**  
**ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՎԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՎԱՏԱՆԱՅ**  
**ԱՌ ՄԻՐԵՑԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՆ**  
**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ**  
**ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԵՆ ՎԱՄԲԱՐ,**  
**ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ**

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրինութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Մայր Եկեղեցու հաւարաւոր զաւակիդ:

Միացեալ Նահանգներ Հովուապետական Մեր անդրանիկ այցելութեան ընթացքին, որ կատարեցինք ազգային մեր կեանքում յոբելեանական 2001 թուականին, Մենք ուրախ առիթն ունեցանք անձնապէս ճանաչելու ազնիւ հայորդուդ եւ ականաւորես լինելու Ձեր որդիական սիրտն ու նուիրումին՝ հանդէպ Մայր Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը:

Մեծապէս ուրախ ենք, որ Ձեր եւ Ձեզ գործակից հայորդեաց աջակցութիւնը ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի հոգեւոր դասին անուսել արգասատոր է դարձնում Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ծառայութիւնները մեր ժողովրդին: Տարիներ շարունակ զանազան պարասխանաւորու պաշտօններում Դուք աշխոյժ մասնակցութիւն էք բերել եկեղեցաշէն ծրագրերի իրականացմանը՝ առաջնորդուելով ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմը միշտ շէն ու պայծառ փեսնելու համոզումով:

Գովութեան ու բարձր գնահատանքի է արժանի, որ վարչական ծառայութեանը զուգընթաց Դուք նաեւ Ձեր նիւթական աջակցութիւնն էք բերել մեր Եկեղեցու առաքելութեան իրականացմանը: Ձեր անուան դիմաց այլեւս արձանագրուած է եկեղեցասէր ու բարեգործ հայորդու պատրուաւոր կոչումը՝ որպէս արժանի գնահատանք ազգային եւ եկեղեցական կեանքում բերած բազմամեայ արդիւնաշատ Ձեր ծառայութեան:

Յարգարժան պրն Արմէն Համբար, բերելով Ձեզ Մեր սրտաբուխ բարեմաղթութիւնները եւ սիրով ընդառաջելով Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի ազնիւ խընդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Առ Աստուած ամենաջերմ աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր Մայր Եկեղեցուն ու բարեպաշտ ժողովրդին:

Թող Տէրը քաջառողջ երկար կեանք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ պարգևի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

*Ողջ լերութք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ**

Տուաւ Կոնդակս ի 30-ն Մարտի  
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ  
ի Մայրապետ Սրբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 153